# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

05. *դեկտեմբերի. 2016թ.*

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից՝ Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու դեկտեմբերի 05-ի թիվ 22-Ա, 23-Ն,24-Ն,25-Ա,26-Ն որոշումները :

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

*Կապ.՝*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 11փ 4 2
sarahart.lori@mta.gov.am

հեռ՝. _____
Էլ.փոստ՝

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 22 - Ա

« 05» դեկտեմբերի 2016 թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12--րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ կետի 4.1 ենթակետով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի
1.Սարահարթ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Սարահարթ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության արոտավայրերը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին:
3. Սարահարթ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
4: Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Բարիկյան Վահան | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Հալաջյան Արթուր | | | |

Համայնքի ղեկավար՝ Վ. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք, հասցե գ.Սարահարթ

հեռ. —
էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 23 - Ն

« 05 » դեկտեմբեր 2016 թ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ և 72-րդ հոդվածներով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Սարահարթ համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:
3. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 25-ի «Սարահարթ համայնքի 2016 թվականի համար տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 20-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Բարիկյան Վահան | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Հալաջյան Արթուր | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար _____ Վ. Փիլոյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
2016թ դեկտեմբերի 5 ի թիվ 23-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1 հիմնական օբեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ.

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

4. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 180000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 40000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 400000դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 700000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 350000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 4000 դրամ:

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 2000 դրամ:

7.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

Սարահարթ համայնքի ղեկավար Վ. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք, հասցե գ.Սարահարթ

հեռ. --
էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24 - Ն

« 05» դեկտեմբերի 2016 թ

«Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29 կետով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սարահարթ համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |
| Հալաջյան Արթուր | | | |
| Մանուկյան Նազար | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար _____ Վ. Փիլոյան

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ N.

«20» հոկտեմբերի 2016 թ.

Վարչության ղեկավար

ՍՏԱՑԱԿԱՆ

Գույքագրման անցկացման սկզբում բոլոր ապրանքանյութական արժեքների մուտքային և ելքային փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն, բոլոր ստացված ապրանքանյութական արժեքները մուտքագրված են և բոլոր դուրս գրված ապրանքանյութական արժեքները ելք են արված:

Նյութական պատասխանատու անձ

ավագ մասնագետ Գևորգ Գևորգյան
(պաշտոնը) (ազգանուն, անուն) (ստորագրություն)

ավագ գլխավոր հաշվապահ Հրաչիկ Գևորգյան
(պաշտոնը) (ազգանուն, անուն) (ստորագրություն)

Գույքագրումը սկսվել է

«20» հոկտեմբերի 2016 թ.

Գույքագրումը վերջացել է

«22» հոկտեմբերի 2016 թ.

| հ/հ | Անվանակարգ | Ապրանքանյութական արժեքների անվանումը, տեսակը, խումբը և այլն | Չափ. միավ. | Գինը | Փաստացի կանխիկ | | Հաշվապահական հաշվառման տվյալ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակ | գումար | քանակ | գումար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | | Աղյուսներով շենք | հատ | ըստ հանձնման | 1 | | 1 | |
| 2 | | Ջեռուցման համակարգ | -"- | -"- | 1 | | 1 | |
| 3 | | Հանձակացիր (ՊՊԵԼ) | -"- | -"- | 3 | | 3 | |
| 4 | | Վիտրաժներ | -"- | -"- | 1 | | 1 | |
| 5 | | Դռներ | -"- | | 1 | | 1 | |
| 6 | | Գրասեղան ուսուցչի | | 280000 | 1 | 280000 | 1 | 280000 |
| 7 | | Գրասեղան աշակերտական | | 45833 | 4 | 220000 | 4 | 220000 |
| 8 | | Գրասեղան դպրոցական | | 54166 | 4 | 260000 | 4 | 260000 |
| 9 | | Գրատախտակ բազկատոռ | | 130000 | 1 | 130000 | 1 | 130000 |
| 10 | | Աթոռ կոշտակով | | 12500 | 7 | 105000 | 7 | 105000 |
| 11 | | Հանձակացիր | | 160000 | 1 | 160000 | 1 | 160000 |
| 12 | | Վենտիլյատոր | | 58000 | 1 | 58000 | 1 | 58000 |
| 13 | | Մաղլյա | | 102500 | 1 | 102500 | 1 | 102500 |
| 14 | | Հասակաչափ կանգնակով | | 22000 | 1 | 22000 | 1 | 22000 |
| 15 | | Ալրեշնաշար | | 6000 | 1 | 6000 | 1 | 6000 |
| 16 | | Դիմաստիկ | | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 |
| 17 | | Մկնաթակ | | 3000 | 1 | 3000 | 1 | 3000 |
| 18 | | Քարտիզ | | 38000 | 1 | 38000 | 1 | 38000 |
| 19 | | Գեղ հիշողական | | 5500 | 1 | 5500 | 1 | 5500 |
| 20 | | ՅԱԶ-31-10 | | 2200000 | 1 | 2200000 | 1 | 2200000 |
| 21 | | ԴՏ-75 դրամկար | | 575000 | 1 | 575000 | 1 | 575000 |
| 22 | | ՍԱԶ-5 կամրջակ | | 415000 | 1 | 415000 | 1 | 415000 |
| 23 | | Աշակերտական գրասեղան | | 28500 | 4 | 114000 | 4 | 114000 |
| 24 | | Աշակերտական գրասեղան | | 120000 | 1 | 120000 | 1 | 120000 |
| 25 | | Աթոռակներ | | 12500 | 12 | 150000 | 12 | 150000 |
| 26 | | Հրդեհաշեջիչ գրասենյակ | | 6588000 | 1 | 6588000 | 1 | 6588000 |
| 27 | | Ֆիզկաբինետ «Տամտակներ» | | 220000 | 1 | 220000 | 1 | 220000 |
| 28 | | Հեռուստացույց գունավոր | | 130000 | 1 | 130000 | 1 | 130000 |
| 29 | | Օդափոխիչ բազկաթոռներ | | 50000 | 2 | 100000 | 2 | 100000 |
| 30 | | Ուսանողական գրասեղաններ | | 25000 | 14 | 350000 | 14 | 350000 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Փաստացի քանակների ընդհանուրը (սյունակ 6) _____

(տառերով)

_____

Փաստացի գումարների ընդհանուրը (սյունակ 7) _____

(տառերով)

Հանձնաժողովի նախագահ

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

Նյութական պատասխանատու անձ

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

«_____» _____ _____ թ.

_____ _____

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

«_____» _____ _____ թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

05 . դեկտեմբերի . 2016թ

## ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25 - Ա

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, հիմք ընդունելով Սարահարթ համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարահարթ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հատատելու մասին>> թիվ 13 Ա որոշմամբ սահմանված կարգը և հաշվի առնելով համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները, Սարահարթ համայնքի ավագանին որոշում է՝

1.Սարահարթ համայնքի 2016 թվականի բյուջեի 10.07.01 դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից տրամադրել միանվագ սոցիալական օգնություն հետևյալ անձանց՝

ա/ Օհանյան Շողիկ Վարդանի – 30000 դրամ

բ/ Խումարյան Եզնիկ Զավենի – 25000 դրամ

2. Համայնքի ղեկավարին. Ապահովել սույն որոշման կատարումը որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Հանայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Բարիկյան Վահան | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Հալաջյան Արթուր | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար՝ _____ Վ. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք, հասցե գ.Սարահարթ

հեռ. --
Էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26 - Ն

« 05 » դեկտեմբեր 2016 թ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից ու խոտհարքերից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը վարձակալությամբ տրամադրելու:
2. Արոտավայրից օգտվելու վարձավճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի կադաստրային զուտ եկամուտի 15% ի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Բարիկյան Վահան | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Հալաջյան Արթուր | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար _____ Վ. Փիլոյան